

**ԳԵՐՄԱՆԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ**

*Բանալի բառեր – Յոհաննես Լեփսիոս, Հայկական հարց, Գերմանա-հայկական ընկերություն, հայկական բարեփոխումներ, Գերմանիա, Թուրքիա, Արևելյան հարց, «Մեսրոպ» պարբերական*

XIX դարի 90-ական թթ. Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող ողբերգական իրադարձությունները առաջացրին աշխարհի առաջադեմ մտավորականների ցասումն ու զայրույթը, որոնցից շատերը դատապարտեցին խաղաղ հայ բնակչության նկատմամբ թուրքական բարբարոսական քաղաքականությունը, հանդես եկան հայ այրիների ու որբերի պաշտպանությամբ:

Համիդյան քաղաքականությանն աջակցող Գերմանիայում, որտեղ հայերը համարվում էին Թուրքիայի ամբողջականությանը սպառնացող անվտանգության տարր, գտնվեցին ազնիվ մարդիկ, ազդեցիկ մտավորականներ, որոնք, հաղթահարելով պետական-քաղաքական շահերով պայմանավորված արգելքները, մարդասիրական մեծ օգնություն ցույց տվեցին տառապյալ հայ ժողովրդին: Ի տարբերություն, օրինակ, Անգլիայի ու Ֆրանսիայի, որտեղ բազմաթիվ հեղինակավոր անհատներ հանդես էին գալիս հայերի պաշտպանությամբ, Գերմանիայում նման գործիչների թիվը մեծ չէր: Նրանց շարքում էին Յոհաննես Լեփսիոսը, Պաուլ Ռոհրբախը, Էվալդ Շթիրը, Մարտին Ռադեն և այլք, որոնք դարձան հայ ժողովրդի ջերմ պաշտպանը: Հայերի հետ շփման և հայ ազգային ֆենոմենը ճանաչելու ընթացքում գերմանացի այդ մտավորականները, ի դեմս հայ ժողովրդի, իրենց համար հայտնաբերեցին «ամենաընդունակ եւ յառաջադեմ ցեղը ամբողջ առաջաւոր Ասիոյ մէջ»<sup>1</sup>, որն ի վիճակի էր ստանձնել Արևելքի զարգացման գործը: Ուստի այս գործիչները գտնում էին, որ Գերմանիան պետք է սերտ հարաբերություններ հաստատի հայ ժողովրդի հետ՝ դարձնելով նրան իր գործընկերն Արևելքում: «Հայերը որպէս քաղաքական և մշակութային ազդակ Արևելքում» հոդվածում Պ. Ռոհրբախը գրում էր. «Գերմանիան, որպէս Արևելքի մեջ առաջնակարգ կերպով շահագրգռված մի պետութիւն, պետք է ձգտի գրաւել հայերին: Որովհետեւ երկաթուղիներով ու զինւորական միսիաներով չէ, որ Գերմանիան պիտի յաջողի իր քաղաքական նպատակների մէջ: Մենք պարտաւոր ենք նույնքան մեծ կարեւորութիւն տալ նաեւ կուլտուր-բարոյական յարաբե-

<sup>1</sup> Տե՛ս „Mesrop”, թիվ 1, հուլիս, 1914, մաս երկրորդ, էջ 14:

րութիւնների մշակմանը Թիւրքիոյ մէջ բնակուող բոլոր ազգութիւնների հետ. եւ ոչ մէկ ազգ այս ասպարեզի վրայ մեզ կարող է այնքան օգտակար լինել, որքան Հայը»<sup>1</sup>:

Հայտնի է, որ Գերմանիան նպատակ ուներ դառնալ աշխարհակալ տերություն և մեծ ծրագրեր ուներ՝ կապված Մերձավոր Արևելքի և Փոքր Ասիայի հետ: Գերմանիայի՝ Արևելքում իրագործվող ծավալապաշտական քաղաքականության արտահայտություններից էր Բեռլին-Բաղդադ երկաթուղու կառուցման նախագիծը: Այս ճանապարհին նրա առաջնային նպատակն իր ազդեցության ուժեղացումն էր Ասիական Թուրքիայում, հատկապէս՝ Ռուսաստանի սահմանամերձ շրջաններում: Հենց այդ ենթատեքստում էր, որ նա սկսեց ակտիվ մասնակցություն ունենալ Արևելյան հարցի և նրա անբաժան մասը կազմող Հայկական հարցի խնդրում, որտեղ բախվում էին մեծ տերությունների շահերը: Այս հանգամանքը ցայտուն արտահայտվում էր նաև Գերմանիայի և ցարական Ռուսաստանի փոխհարաբերություններում: Պաշտոնական Գերմանիան, հաշվի առնելով հայերի ռուսամետ դիրքորոշումը, սկզբնապէս դեմ էր Հայկական հարցի քննարկումներին՝ գտնելով, որ այն քաղաքական և ռազմավարական տեսանկյուններից կխանգարի Գերմանիային իրականացնել իր իմպերիալիստական նկրտումները: Նույնիսկ ծրագրվում էր Վանի, Բիթլիսի և Էրզրումի շուրջ կես միլիոն հայ բնակչությանը քշել Հայեայ ու Միջագետք և հայերի լքյալ տարածքները բնակեցնել արաբներով<sup>2</sup>, որով պողպատե պատնէշ կստեղծվեր Ռուսաստանի դեմ: Գերմանիայի արտաքին գործերի նախարարի տեղակալ Յիմերմանն ասում էր. «Հայերով բնակեցված Հայաստանը վտանգավոր է Գերմանիայի շահերի համար, քանի որ հայերը Թուրքիայի թուլության աղբյուրն են»<sup>3</sup>: Իսկ 1913 թ. աշնանը Բեռլինում ստեղծվեց գերմանական կառավարությանն առընթեր «Գերմանա-թուրքական կոմիտե», որի նպատակը երիտթուրքական իշխանություններին աջակցելն էր և Թուրքիայում Գերմանիայի ազդեցության ուժեղացումը:

Ինչպէս տեսնում ենք, գերմանական պաշտոնական դիվանագիտությունն աստիճանաբար մի կողմ էր քաշվում Հայկական հարցից և աշխատում չմիջամտել թուրքերի՝ հայկական բարենորոգումների տապալմանն ուղղված գործողություններին: Այս պայմաններում հայ ժողովրդի գերմանացի բարեկամները միջոցներ էին փնտրում՝ հայկական բարեփոխումները կյանքի կոչելու և ընդհանրապէս հայ-գերմանական կապերն ամրապնդելու ուղղությամբ: Դա առավելապէս նկատելի դարձավ XX դարի երկրորդ

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 15:

<sup>2</sup> Sk' u **Hofmann T.**, Armenisches Golgatha, ohne Brot, ohne Wasser, ohne Grab, Armenisch-Deutsche Korrespondenz, Nr. 144, Jg. 2009/Heft 2, էջ 65:

<sup>3</sup> **Аветян А. С.**, Германский империализм на Ближнем Востоке. Колониальная политика германского империализма и миссия Лимана фон Сандерса, М., 1966, էջ 36:

տասնամյակի սկզբին Բալկանյան երկրների դեմ պատերազմում Թուրքիայի կրած պարտություններից հետո, երբ վերստին մեծ տերությունների քաղաքականության օրակարգում հայտնվեց Հայկական հարցը, որի լուծումը բախտորոշ նշանակություն ուներ Օսմանյան պետության համար: Ստեղծված պայմաններում Գերմանիայի հայասիրական ուժերը փորձեցին իրենց ներդրումն ունենալ հայկական բարեփոխումների իրագործմանը խանգարող խոչընդոտների չեզոքացման գործում: Ուստի, երբ 1913 թ. սկզբին հիմնվեց Բեռլինի հայկական կոմիտեն<sup>1</sup>, հայ ժողովրդի գերմանացի բարեկամները, մասնավորապես Յոհ. Լեփսիուսը, պատրաստակամությամբ համաձայնեցին նպաստել դրա գործունեությանը: Այդ գործիչները համոզված էին, որ Գերմանիան պետք է վերստին մեծ տերությունների քաղաքական օրակարգ մտած Հայկական բարենորոգումների քննարկման հարցում ակտիվ դիրքորոշում ցուցաբերի: Եթե նա շահագրգռված էր իր ազդեցությունը տարածել Մերձավոր Արևելքում, ուստի պետք է նաև սերտ հարաբերություններ հաստատեր Թուրքիայի հայության հետ<sup>2</sup>: Ըստ այդմ հարկավոր էր գերմանական կառավարությանը հասկանալի դարձնել, որ հայերն ինչպես իրենց թվաքանակով, այնպես էլ մշակութային ու տնտեսական զարգացման մակարդակով շատ կարևոր տարր են Օսմանյան պետության մեջ, և որ, եթե համապատասխան բարեփոխումների միջոցով նրանց համար ստեղծվեն ապահով պայմաններ, նրանց և թուրքերի միջև ոչ միայն խաղաղ համագոյակցություն կհաստատվի, այլև նրանք նույնիսկ կարող են վճռական դեր կատարել նաև Թուրքիայի վերակենդանացման թե՛ այնտեղ, թե՛ ամբողջ Մերձավոր Արևելքում գերմանական տնտեսաքաղաքական ծրագրերն իրականացնելու հարցում<sup>3</sup>:

«Թուրքիայի ապագան» հոդվածում Յոհ. Լեփսիուսը քրիստոնյաներին համարում էր Թուրքիայի արդիականացման հիմքը: Նա նշում էր, որ քրիստոնյաները, մասնավորապես հայերը, ակտիվ են տնտեսական, քաղաքական և մշակութային ոլորտներում, արհեստագործությունը և առևտուրը գտնվում են նրանց ձեռքում, տիրապետում են օտար լեզուների: Հայերի ներգրավումը երկրի զարգացման հարցում բխում է Թուրքիայի շահերից: Հետևաբար, ըստ Լեփսիուսի, ինչպես Թուրքիան, այնպես էլ նրա դաշնակից Գերմանիան պետք է շահագրգռված լինեին հայկական բարեփոխումների

---

<sup>1</sup> Հայկական բարեփոխումների հարցում զգալի շահագրգռվածություն էր դրսևորում Ռուսաստանը: Ուստի ինչպես 1878 թ., այս անգամ էլ Ռուսաստանը ստանձնեց նախաձեռնությունը Արևմտյան Հայաստանում բարեփոխումների միջոցով կարգ ու կանոն և օրինականություն ստեղծելու խնդրում: Այդ նպատակով Եվրոպայի տարբեր մայրաքաղաքներում հիմնվեցին հայկական կոմիտեներ, որոնք հայոց կաթողիկոսի պատվիրակ Պողոս Նուբար փաշայի և եվրոպացի բարեկամների օգնությամբ պետք է աշխատեին համոզել մեծ տերություններին հայկական բարեփոխումների իրականացման անհետաձգելի անհրաժեշտությունը:

<sup>2</sup> Տե՛ս **Սիմոնյան Հ.**, Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք 5, Երևան, 2013, էջ 1055:

<sup>3</sup> Տե՛ս „Mesrop”, թիվ 1, հուլիս, 1914, մաս երկրորդ, էջ 3:

իրականացմամբ<sup>1</sup>: Գերմանիայի կողմից հայանպաստ դիրքորոշում որդեգրելու անհրաժեշտությունը Լեփսիուսը պատճառաբանում էր նաև այն հանգամանքով, որ բարեփոխումների մերժման դեպքում Օսմանյան պետությունը հարկադրված կլիներ Հայաստանը զիջել Ռուսաստանին և այդպիսով դատապարտվել ամբողջական մասնատման<sup>2</sup>, որի դեպքում Գերմանիան ևս ոչինչ չէր շահի<sup>3</sup>:

Ավելացնենք նաև, որ Լեփսիուսը մերժում էր Թուրքիայի «իսլամական մշակութային պետություն» դառնալու հնարավորությունը: Նրա կարծիքով՝ Թուրքիան կարող էր մշակութային երկիր դառնալ քրիստոնեական մշակութի զարգացման միջոցով, և այդ հարցում նույնպես կարևորագույն դերը վիճակված էր հայերին<sup>4</sup>:

Այսպիսով, Լեփսիուսի համոզմամբ, Օսմանյան պետության ինչպես «քաղաքական գոյության», այնպես էլ «մշակութային պետություն» դառնալու ճանապարհին վճռական դերը պատկանում էր հայերին:

Վերոնշյալ տեսակետները չէին կարող Գերմանիայի պաշտոնական շրջանների վրա ազդեցություն չգործել, մանավանդ որ Բալկանյան պատերազմի ընթացքը չարդարացրեց այն հույսերը, որ գերմանական քաղաքականությունը կապում էր պաշտոնական Թուրքիայի հետ՝ միակողմանի նպաստելով նրա քաղաքականությանը: Գերմանական կառավարությունն այժմ լավ գիտակցում էր, որ առանց բարեփոխումների և առանց թուրքական կառավարությանը պետության տարբեր ազգությունների, մանավանդ հայերի հետ հաշտեցնելու՝ Օսմանյան պետության ամբողջականության պահպանումը անհնար կլիներ: Արդեն 1913 թ. հունվարին Գերմանիայի ԱԳՆ-ի պետքարտուղարի տեղակալ Յիմերմանը Կ. Պոլսի դեսպան Վանզենհայմին հրահանգում էր, որ գերմանական կառավարությունը հայկական բարեփոխումների վերաբերյալ կայանալիք բանակցությունների ընթացքում չպետք է չեզոք դիրքորոշում գրավեր, այլ ելնելով Թուրքիայում իր տնտեսական շահերից՝ պետք է ակտիվորեն մասնակցեր դրանց<sup>5</sup>:

Այս շրջանում փոխվել էր նաև գերմանական հասարակության մեջ հայ ժողովրդի մասին նախկինում գոյություն ունեցող վերին աստիճանի աննպաստ կարծիքը, և ի հայտ էին եկել հայերի տնտեսական ու մշակութային ունակություններն ավելի ճիշտ կերպով գնահատելու նշաններ: Այս գործում մեծ դերակատարություն ունեին հայ և գերմանացի ժողովուրդների մշակութային շփումները. 1894-1896 թթ. կոտորածներից հետո Հայաստանում

---

<sup>1</sup> Տե՛ս **Aschke M.**, Von den armenischen Reformen 1913 zum Völkermord an den Armeniern 1915 // Armenisch-Deutsche Korrespondenz, Nr. 164, Jg. 2014/Heft 3, էջ 48:

<sup>2</sup> Տե՛ս **Հայրունի Ա.**, Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը, Երևան, 2002, էջ 203:

<sup>3</sup> Տե՛ս **Aschke M.**, նշվ. աշխ., էջ 48:

<sup>4</sup> Տե՛ս **Հայրունի Ա.**, նշվ. աշխ., էջ 203:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 201:

հիմնվել էին մեծ թվով գերմանական դպրոցներ, որբանոցներ և հիվանդանոցներ, որոնք այնտեղ տարածում էին գերմանական մշակույթը: Հայաստանում մեծ թափով առաջ էր ընթանում գերմաներենի, գերմանական գիտության ու գրականության ուսումնասիրությունը: Բազմաթիվ հայ երիտասարդներ սովորել էին գերմանական բարձրագույն ուսումնական հաստատություններում և կապեր հաստատել գիտության և մշակույթի ոլորտի ներկայացուցիչների հետ: Հայոց լեզվի, գրականության և պատմության ուսումնասիրությունը շատ դեպքերում կատարվում էր գերմանացի գիտնականների ակտիվ աջակցությամբ<sup>1</sup>:

Հայ և գերմանացի ժողովուրդների փոխադարձ կապերն ավելի խորացնելու և ամուր և տևական հիմքերի վրա դնելու նպատակով Յոհ. Լեփսիուսն ու նրա բարեկամները որոշեցին հիմնել Գերմանա-հայկական ընկերություն, որը պետք է նպաստեր հայ-գերմանական մերձեցմանը՝ մշակութային հողի վրա և Թուրքիայի արդիականացմանը ներսից՝ հայերի (հայկական մշակույթի զարգացման) միջոցով ու դրսից՝ գերմանական ազդեցության ուժեղացմամբ: Վերջինս դրսևորվելու էր Թուրքիայում դպրոցներ, գիտական հաստատություններ բացելով, որոնք պետք է նպաստեին այդ երկրում գերմանական մշակույթի և լեզվի ազդեցության ուժեղացմանը: Այն պատկերացումը, որ գերմանական ազդեցության ավելացումը բարեփոխված և արդիականացված Թուրքիայում, Բաղդադի երկաթուղու կառուցումը և Անատոլիայի այլ երկաթուղային գծերի շահագործման միջոցով տնտեսական մեծ հնարավորությունների առաջ գալը, գերմանական տնտեսության հսկայական կապիտալ ներդրումներն այս տարածքում կլինեին գրավիչ և հեռանկարային ինչպես թուրքական պետության, այնպես էլ նրա քրիստոնյա ազգությունների անվտանգության ու զարգացման համար, մղում էր Լեփսիուսին և նրա բարեկամներին գործնական քայլեր ձեռնարկել Գերմանա-հայկական ընկերություն ստեղծելու ուղղությամբ<sup>2</sup>:

1913 թ. մարտի սկզբին Բեռլինում տեղի ունեցավ Լեփսիուսի, Ռոհրբախի և Շթիրի հանդիպումը: Նրանք պայմանավորվեցին հնարավորինս արագ իրականացնել Գերմանա-հայկական ընկերության հիմնադրումը: Այդ նպատակով 1913 թ. մարտի 29-ից այս գործիչները սկսեցին հանդիպումներ ունենալ Գերմանիայում ապրող հայ արդյունաբերողների, առևտրականների, ուսանողների, մտավորականների հետ: Վերջինների թվում էին բանաստեղծ Ավետիք Իսահակյանը և հասարակական-քաղաքական գործիչ, հրապարակախոս Լիպարիտ Նազարյանը, որոնք քաղաքական պատճառներով հեռացել էին իրենց հայրենիքից: Բանակցություններ էր վարում նաև Բեռլինի հայկական համայնքի ղեկավար Ջեյմս Գրինֆիլդը: Վերջինիս միջոցով հաջող-

---

<sup>1</sup> Տե՛ս **Meißner A.**, Die Gründung der Deutsch-Armenischen Gesellschaft: in 100 Jahre Deutsch-Armenische Gesellschaft (Hg. Raffi Kantian), Frankfurt am Mein, 2014, էջ 105:

<sup>2</sup> Տե՛ս **Aschke M.**, նշվ. աշխ., էջ 48:

վեց կապ հաստատել նաև Հայաստանում բնակվող հայ մտավորականների հետ: Էջմիածնից Կարապետ Տեր-Մկրտչյանը\* ողջունում էր կազմակերպության ստեղծման գաղափարը: Նա կարողացավ նաև այլ համակիրներ գտնել Հայաստանում, և բացի դրանից նրա օգնությամբ կապ հաստատվեց նաև Ստամբուլի պատրիարքարանի հետ<sup>1</sup>:

Մեկ ամբողջ տարի պահանջվեց ընկերության հիմնադրման ծրագիրը կյանքի կոչելու համար: Այս ընթացքում Բեռլինում բազմակողմանի աշխատանքներ էին տարվում. հայթայթվում էին ֆինանսական միջոցներ, առաջ էր տարվում սեփական մամուլի օրգան ունենալու խնդիրը: Կազմվեց նաև ստեղծվելիք կազմակերպության հիմնադրումն ազդարարող ընդարձակ կոչի նախագիծը, որը պաշտոնապես պետք է ընդունվեր կազմակերպության հիմնադիր նիստում: Չնայած փաստաթուղթը դեռ «նախագիծ» էր, բայց այն մինչև հաստատումը հրապարակվեց մամուլում՝ տարածվելով նաև հայկական պարբերականներում:

Կոչում հույս էր հայտնվում, որ դարձյալ մեծ տերությունների քաղաքական օրակարգում հայտնված Հայկական հարցը կլուծվեր, կվերացվեին հիմնական խոչընդոտները, և հայ ժողովրդին կտրվեր տնտեսական և մշակութային զարգացման ավելի լայն հնարավորություն: Նշվում էր նաև, որ այս հարցում առավել մեծ շահագրգռվածություն ցուցաբերող պետությունը Գերմանիան էր, որի տնտեսական մեծ ձեռնարկումները Փոքր Ասիայում տեղի էին ունենում նաև հայաբնակ շրջաններում: Այս հանգամանքը նրան հարկադրում էր ավելի սերտ հարաբերություններ պահպանել հայ ժողովրդի հետ, «որոնք բոլոր այդ տարածքներում տնտեսական և մշակութային կյանքի վարիչներ էին»:

Կոչում նշվում էր նաև հայ և գերմանացի ժողովուրդների մշակութային շփումների մասին, և անհրաժեշտ էր համարվում ավելի խորացնել դրանք: Ուստի կոչի վերջում կարդում ենք. «Բոլոր նրանց, ովքեր գիտական, քաղաքական կամ ընդհանրապես մշակութային, մարդասիրական և կրոնական հետաքրքրություններից ելնելով, մտածում են գերմանա-հայկական կապերի ամրապնդման մասին, կոչ ենք անում մեզ հետ միավորվել «Գերմանա-հայկական ընկերության» մեջ»<sup>2</sup>:

---

\* Կարապետ Տեր-Մկրտչյանը ծնվել է Նախիջևանում 1866 թ., 1880-1888 թթ. սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, 1889 թ. օծվել սարկավագ, իսկ 1894 թ.՝ քահանա: 1895 թ. փետրվարին ստացել է վարդապետի կոչում: Գերմանիայում ուսումն ավարտելուց հետո վերադարձել է հայրենիք: 1899 թ. նշանակվել է Գևորգյան ճեմարանի տեսուչ, խմբագրել է «Արարատ» ամսագիրը: 1907 թ. տեղափոխվել է Բաքու և աշխատել որպես գիմնագիայի ուսուցիչ: 1907 թ. նա նշանակվել է Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ:

<sup>1</sup> Meißner A., Martin Rades „Christliche Welt“ und Armenien, Band 22, Berlin, 2010, էջ 200:

<sup>2</sup> Meißner A., Die Gründung der Deutsch-Armenischen Gesellschaft, էջ 105:

Այս կազմակերպությունը հետապնդելու էր հետևյալ նպատակները. ա) Գերմանիայում ստեղծել արդար և անկողմնակալ կարծիք հայ ժողովրդի և հայերի շրջանում գերմանական ժողովրդի վերաբերյալ, բ) համակողմանի պատկերացում տալ համաշխարհային մշակույթում հայ ժողովրդի մատուցած ծառայությունների և հայ մշակույթի զարգացման հարցում գերմանական ժողովրդի ցուցաբերած ձգտումների վերաբերյալ, գ) օժանդակել գերմանացիների և հայերի, մասնավորապես Գերմանիայում սովորող հայ ուսանողների անձնական կապերի զարգացմանը<sup>1</sup>:

Այդ նպատակների իրականացման ճանապարհին կարևորագույն խնդիրներից էր համարվում ընկերության պաշտոնական պարբերականի հրատարակումը երկու լեզուներով՝ հայերեն և գերմաներեն: Պարբերականը, ընկերության անդամների միջև կապ ստեղծելուց և պահպանելուց գատ, պետք է ծառայեր մի կողմից գերմանալեզու բաժնում՝ գերմանական հասարակությանը հայ ժողովրդի կյանքին, նրա «ապրումներին ու ցավերին» ճշգրտորեն ծանոթացնելու գործին, մյուս կողմից՝ հայալեզու բաժնում հայ ժողովրդին տեղեկություններ հաղորդել արևմտյան մշակույթի առաջադիմության, գիտության ու կրթության արդյունքների մասին, որոնցում Գերմանիան նշանակալից բաժին ուներ<sup>2</sup>: Որոշվեց պարբերականի գերմաներեն մասի խմբագիր նշանակել Էվալդ Շթիրին, իսկ հայերեն մասի խմբագիր դարձավ Գրինֆիլդը: Գերմանա-հայկական ընկերության անդամներին «Mesrop» («Մեսրոպ») խորագիրը կրող պարբերականը հատկացվելու էր անվճար: Առաջին փորձնական պրակի հրատարակման ժամկետ նշանակվեց 1914 թ. հուլիսի 1-ը<sup>3</sup>: Պարբերականի գերմաներեն բաժնի նյութերը լույս էին տեսնելու Բեռլինում, իսկ հայերեն բաժնինը՝ Կ. Պոլսում կամ Վիեննայում<sup>4</sup>: Յ. Մարկվարտի միջոցով, ով մասնակցել է ընկերության հիմնադրման նախապատրաստական աշխատանքներին, Շթիրը համագործակցության մեջ մտավ Վիեննայի Մխիթարյանների հայտնի տպարանի տնօրեն, Մխիթարյան միաբանության անդամ Ներսես Ակինյանի հետ: Համաձայնություն ձեռք բերվեց «Mesrop»-ի հայերեն բաժինը տպագրել Վիեննայի հայկական տպարանում<sup>5</sup>:

Կազմակերպության նպատակների իրականացման համար նախատեսվում էր կատարել մի շարք այլ աշխատանքներ, ինչպես, օրինակ, Հայաստանի իրադարձությունների վերաբերյալ ճշգրիտ տեղեկությունների հաղորդում գերմանական մամուլին, արժեքավոր հայկական գործերի թարգմանություն գերմաներեն և հակառակը՝ հայոց լեզվի, հայ մշակույթի և պատմու-

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 106:

<sup>2</sup> Տե՛ս „Mesrop”, թիվ 1, հուլիս, 1914, մաս երկրորդ, էջ 5:

<sup>3</sup> Տե՛ս **Meißner A.**, Martin Rades „Christliche Welt” und Armenien, էջ 202:

<sup>4</sup> Տե՛ս **Միմոնյան Հր.**, նշվ. աշխ., էջ 1062:

<sup>5</sup> Տե՛ս **Meißner A.**, նշվ. աշխ., էջ 202:

թյան ուսումնասիրության համար Գերմանիայում հայագիտական գրադարանի հիմնադրում, հայկական դպրոցներում գերմաներենի դասավանդման խրախուսում, Գերմանիայում սովորող հայ ուսանողների համար տեղեկատվական կենտրոնի հիմնադրում և գերմանական ընտանիքների հետ նրանց շփումների ընդլայնում<sup>1</sup>:

Մինչ Բեռլինում նախապատրաստական աշխատանքներ էին տարվում ընկերության հիմնադրման ուղղությամբ, 1914 թ. հունվարի 26-ին Կ. Պոլսում ստորագրվեց Արևմտյան Հայաստանում բարեփոխումներ իրականացնելու վերաբերյալ ռուս-թուրքական համաձայնագիր: Այն նախատեսում էր Արևմտյան Հայաստանը բաժանել երկու նահանգի: Առաջինի մեջ մտնելու էին Էրզրումի, Տրապիզոնի և Սեբաստիայի, իսկ երկրորդի մեջ Վանի, Բիթլիսի, Դիարբեքիի և Խարբերդի վիլայեթները: Նահանգապետների (վերատեսուչների) թեկնածություններն առաջադրելու էին եվրոպացիները, և հաստատելու էր սուլթանը: Նահանգապետների ենթակայության ներքո էին գտնվելու վարչական, դատական և ոստիկանական իշխանությունները: Հողային հարցերը պետք է վճռվեին նահանգապետի անմիջական միջամտությամբ: Նահանգներում պաշտոնական գրագրությունը կատարվելու էր տեղի ժողովուրդների լեզուներով (հայերեն, քրդերեն և թուրքերեն):

Նահանգապետներն ունենալու էին զինված ուժեր, որոնք պետք է հետևեին ներքին կարգ ու կանոնին: Հայերին արտոնվում էր զենք կրել: Նահանգների վարչական խորհուրդները կազմվելու էին հավասար թվով մահմեդականներից ու քրիստոնյաներից: Նույն սկզբունքը պետք է կիրառվեր ոստիկանական և այլ պաշտոններ բաշխելիս: Ազգային դպրոցների պահպանման ծախսերն իր վրա էր վերցնում Օսմանյան պետությունը<sup>2</sup>:

1914 թ. ապրիլի 23-ին Ավ. Իսահակյանը Ամերիկայում գտնվող Միմոն Վրացյանին Բեռլինից գրում էր. «Ես երկու ամսից ավելի է, որ Բեռլինում եմ, հայկական և գերմանական կոմիտեի գործն եմ վարում՝ քարտուղարն եմ: Եվ հրատարակելու ենք ամսաթերթ՝ հայերեն և գերմաներեն բաժիններով: Շուտով կստանաս (կոմիտեի) կոչը և ծրագիրը, որ թե թերթումդ հրատարակես և թե մեզ աշխատակցես: Շատ անվանի մարդիկ ունենք մեզ հետ, շատ հայտնի անձեր՝ ամբողջ Գերմանիայում հռչակված և ազդեցիկ: Վստահ կարելի է ասել, որ եթե հայ-գերման ընկերությունը չլիներ, այս ռեֆորմները ջուրն էին ընկել<sup>\*</sup>: Դա խոստովանում են թե բժ. Զավրիևը և թե (ՀՅԴ) Պոլսի

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 203-204:

<sup>2</sup> Տե՛ս «Հայոց պատմություն: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը»: Դասագիրք բուհերի համար (Մ. Ա. Կատվայան, Պ. Հ. Հովհաննիսյան, Է. Գ. Մինասյան և ուրիշներ): Պրոֆ. Հր. Ռ. Միմոնյանի խմբագրությամբ, Երևան, 2012, էջ 447-448:

<sup>\*</sup> 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագիրը ստորագրվել է Գերմանահայկական ընկերության հիմնադրումից չորս ամիս առաջ: Հավանաբար նամակագիրը



բյուրոն: Մեր բարեկամ գերմանացիք համոզում էին գերման դիպլոմատներին և նրանց վրա ճնշում գործադրում, որ համաձայնվեն ռուսներին»<sup>1</sup>:

Բարեփոխումների համաձայնագրի ստորագրումը արագացրեց Գերմանա-հայկական ընկերության հիմնադրումը:

1914 թ. հունիսի 16-ին Բեռլինի ազգագրության թանգարանի դահլիճում բազմաթիվ հյուրերի ներկայությամբ պաշտոնապես բացվեց ընկերության անդրանիկ նիստը: Ժողովի բացումը կատարեց և այն ղեկավարեց Յոհ. Լեփսիուսը: Ձեկուցումներով հանդես եկան Գրինֆիլդը, Ռոհրբախը: Նիստը պաշտոնապես ընդունեց ամիսներ առաջ հրապարակված կոչի նախագծի տեքստը, որով ազդարարվեց ընկերության ստեղծման մասին: Փաստաթուղթը ստորագրեցին հասարակական կյանքի տարբեր ոլորտներից շուրջ հարյուր անհատներ: Նրանց թվում էին ժամանակի այնպիսի ականավոր գործիչներ, ինչպիսիք էին Ավ. Իսահակյանը, Ներսես Ակինյանը, Լեհման-Հաուպտը, Ռայխսթագի անդամ Ֆրիդրիխ Նաումանը և ուրիշներ: Ընկերության նախագահ ընտրվեց Յոհ. Լեփսիուսը, նրա փոխանորդներ՝ Գրինֆիլդը և Ռոհրբախը, գործավարներ՝ Շթիրը և Իսահակյանը, գանձապահ՝ Արմենակ Հայրանյանը: Կազմակերպությունը կոչվեց «Գերմանա-հայկական ընկերություն» („Deutsch-Armenische Gesellschaft”)<sup>2</sup>:

Ընկերության հիմնադիր անդամներն էին Յոհ. Լեփսիուսը, Յ. Մարկվարտը, Մ. Ռադեն, Պ. Ռոհրբախը, քահանա Է. Շթիրը, Գրինֆիլդը, Դարբինյանը, Հայրանյանը, Մուրադյանը, Շահբազյանը<sup>3</sup>:

1914 թ. հուլիսի 1-ին գերմաներեն և հայերեն բաժիններով հրատարակվեց „Mesrop” պարբերականի առաջին և ցավոք միակ համարը<sup>\*</sup>: Հանդեսի հիմնադրմանը մասնակից հայ գործիչների անունից տպագրվել է հետևյալ համառոտ հաղորդումը. «Մեր օրգանը կոչեցինք «Մեսրոպ» անունով գերմանացի բարեկամների առաջարկությամբ, որովհետև այդ անունը ծանոթ է իրենց աւելի, քան մեկ ուրիշ հայկական անուն ու յետոյ՝ յոբելյանի առիթով (նկատի ունեին գրերի գյուտի 1500-ամյակը-Չ.Ս.) ուզեցինք հարգած լինել յիշատակը այն անձի, որ բացեց մեր ժողովրդի առջև լույսի ճանապարհը»<sup>4</sup>:

Պարբերականը պայմանականորեն բաղկացած էր երկու մասից՝ յուրաքանչյուրը 32 էջ: Դրանում զետեղված էին Պ. Ռոհրբախի („Die Armenier als

---

նկատի է ունեցել գերմանացի հայասերների նախորդ ամիսներին Հայկական հարցի օգտին ծավալած գործունեությունը:

<sup>1</sup> Տե՛ս **Միմոնյան Հր.**, նշվ. աշխ., էջ 1059:

<sup>2</sup> Տե՛ս **Meißner A.**, Martin Rades „Christliche Welt” und Armenien, էջ 204:

<sup>3</sup> Տե՛ս **Հայրունի Ա.**, նշվ. աշխ., էջ 208:

<sup>\*</sup> Պատրաստ էր նաև „Mesrop” հանդեսի երկրորդ համարը, երբ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Որոշ հետազոտողներ կարծում են, որ այդ նյութերը ժամանակին պահ են տրվել Վիեննայի Մխիթարյան միաբանությանը: Դրանք գտնելու բոլոր փնտրտուքները ապարդյուն են անցել:

<sup>4</sup> „Mesrop”, թիվ 1, հուլիս, 1914, մաս երկրորդ, էջ 7:

politischer und kultureller Faktor im Orient” կամ «Հայերը որպես քաղաքական և մշակութային ազդակ Արևելքում»), Յոհ. Լեփսիուսի („Die armenischen Reformen” կամ «Հայկական բարեփոխումները») և Ջեյմս Գրինֆիլդի («Մեր գործի շուրջը») հոդվածները, գրական, հրապարակախոսական այլ նյութեր:

Ընկերության նպատակների մասին բացատրությունները տեղ են գտել Գրինֆիլդի հոդվածում: Նա կարծում էր, որ կլինեն մարդիկ, որոնք իրենց ձեռնարկը կդիտեն որպես Գերմանիայի պետական կառույցների կողմից կյանքի կոչված կազմակերպություն, որը ծառայելու է որպես գործիք՝ միակողմանի պաշտպանելու գերմանական քաղաքական շահերը Հայաստանում և խանգարելու է Ռուսաստանի կողմից այնտեղ կիրառվող քաղաքականությանը: Թյուրիմացություններից և սխալ մեկնաբանություններից խուսափելու համար Գրինֆիլդը գրում էր. «Մեր ընկերությունը կուլտուրական նպատակների է հետևում: Բայց եթե այդ էլ չը լինէր, մենք կատարելապես գիտակցում ենք եւ մեր գերման բարեկամներից աւելի իրազեկները նույնպէս համաձայն են, որ մեր ազգի ապագան սերտ կապով կապված է Ռուսաստանի հետ եւ հայերը պիտի բարեկամական եւ անկեղծ յարաբերութեանց մէջ մնան այս պետութեան հետ: Բայց Ռուսաստանի բարեհաճ դիտաւորութիւնները մեր ազգի նկատմամբ աւելի եւս յաջողութիւն կունենան, եթէ նրանց կաջակցի Տաճկաստանում մեծ ազդեցութիւն վայելող գերման քաղաքականութիւնը: Ուրեմն հայութեան շահերը պահանջում են այս երկու մեծ պետութիւններին կատարել գործակցութիւնը մեր խնդրում եւ Հայ-գերման ընկերութիւնը ապագայում փոխարեն հակառակութեանց առիթ տալու՝ ընդհակառակը պիտի աշխատի մեղմացնել մեր շահերին վնասակար երկպառակութիւնները եւ վերացնել անհիմն կասկածները, ինչպէս որ այդ ցարդ որոշ չափով արել է Բերլինի հայկական կոմիտէն»<sup>1</sup>:

Այսպիսով, հայ ժողովրդի գերմանացի բարեկամները հետևողական աշխատանքի շնորհիվ կարողացան կյանքի կոչել Գերմանա-հայկական ընկերություն ստեղծելու գաղափարը: Ընկերության հիմնադրումով ստեղծվեցին նպաստավոր պայմաններ հայ և գերմանացի ժողովուրդների մշակութային կապերը խորացնելու, միմյանց պատմությունն ու մշակույթը ավելի լավ ճանաչելու և գնահատելու համար: Երկու ժողովուրդների միջև մշակութային կապերի խորացման հնարավորությունը մեծ հեռանկարներ էր բացում հայ և գերմանացի ժողովուրդների համագործակցության, հայ-գերմանական մերձեցման համար, որին ձգտում էին Գերմանիայի հայասիրական ուժերը, և որը համապատասխանում էր Գերմանիայի՝ Արևելքում հետապնդած շահերին:

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 6-7:

### **Грануш Саакян – Основание Немецко-армянского общества**

Представители немецкой интеллигенции – Й. Лепсиус и его соратники, выделяющиеся проармянской деятельностью после гамидских погромов 90-х гг. XIX века, не только поддерживали связь с армянским народом, но и попытались углубить и поставить ее на более прочную и длительную почву.

В ходе общения с армянским народом, оценив и заметив его высокие интеллектуальные способности, немецкие деятели пришли к выводу, что армяне в состоянии взять на себя дело развития всего Востока. Таким образом, они призывали официальную Германию, имеющую большие интересы на Востоке, установить тесные связи с армянским народом, сделав его тем самым своим союзником на Востоке.

Эти взгляды привлекли внимание официальной Германии лишь после поражения Турции в войне против балканских стран, так как не были оправданы те надежды, которые германская политика связывала с Турцией.

В этот период Й. Лепсиус и его соратники решили основать Немецко-армянское общество, которое должно было способствовать армяно-немецкому сближению на культурной основе. После года подготовительных работ, 16 июня 1914 года, в зале Берлинского этнографического музея было официально открыто первое заседание общества, чем и было ознаменовано его открытие. Общество было названо «Немецко-армянское общество» (“Deutsch-Armenische Gesellschaft”), первым председателем которого был избран Й. Лепсиус. 1 июля 1914 года на армянском и немецком языках было опубликовано официальное периодическое издание общества – первый и единственный номер «Месропа». Общество стало мостом между армянским и немецким народом, которое попыталось открыть большие перспективы для сотрудничества двух народов и армяно-немецкого сближения.

### **Hranush Sahakyan – The Foundation of German-Armenian Association**

In the 90s of XIX century since the period of the Hamid massacres German intellectuals Joh. Lepsius and his friends known for their support of Armenians never broke off ties with the Armenian people, but instead, tried to deepen them and put on a firm and lasting ground.

Getting in touch with Armenians and noticing and appreciating their high mental abilities and skills, the German activists had come to the conclusion that the Armenians were able to take the development of the whole East on themselves.

Therefore, they exhorted official Germany, having great interests in the East, to establish close ties with the Armenian people by making them its partner in the East. Official Germany took notice of these views after Turkey's defeat in the war against the Balkan countries as the hopes that German policy linked with Turkey were not justified.

It was in this period that Joh. Lepsius and his friends decided to set up a German-Armenian Society to encourage a rapprochement on the cultural basis.

After a year-long preparatory works, on the 16th of June 1914, in the hall of the Berlin Ethnology Museum officially opened the company's first session, which announced the establishment of the company. The Company was named German-Armenian Association (“Deutsch-Armenische Gesellschaft”) and Joh. Lepsius was elected the first President of it. On the 1st of July 1914, the first and the only edition of the periodical of the Association “Mesrop” was published in the Armenian and German languages. The Association became a bridge between the Armenian and German peoples in an attempt to open up great prospects for both nations.